


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ
ՊԵՏՐ Է ՈՒՂԻՆԻ ԱՊ
Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ
ԳԱՂԻՐԷ (Հաղպատի)

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
HABBANIEH LE CAIRE (Égypte)



ԼՐԱԳՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՊՏՈՒ ՉԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահլիճ.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՈՒՆԱՐ	
Տարեկան Տրամգ	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է
ԵՒ ԲՈՂՔԱՍԱՐԻ ԾԱՌՔԸ
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած
գրութիւնք եւ չ'են սրուիր:

ՀՐԱԻԵՐ ՄԸ ՀԱՅ ԻԳԱԿԱՆ ՍԵՈՒՆ

Տարիները իրարու կը յաջորդեն այն ատենէն ՚ի վեր, յորում անդուծ մարդասպաններու մարդակուլ սուրբերուն տակ ինկան անհամար թուով հայ զահեր:

Ասոնցմէ շատերը հայր ու մայր էին, և կը կրէին գուրգուրացող սիրտ մը իրենց սիրասուն զաւակաց վրայ. սրբել գիտէին անոնց աչքերուն արտասուքը և ՚ի հարկին պատսպարել զանոնք ձմեռուան ցուրտին ու բուքին դէմ. իրենց բազուկներուն մէջ պարուրելով իրենց փոքրիկ սրտի հատորները, զգուանքի ու փայփայանքի տակ կընային կեանքը քաղցրացնել անոնց համար:

Այսօր այդպիսի գորովաշատ ու որբևսէր ծնողներուն ակամայ մահուան գրկին մէջ նետուելէն, որբերու շատ ստուար թիւ մը անոք, մերկ, բոկոտն, ձմրան այս ցրտասարսուռ եղանակներուն մէջ ամէն բանէ զուրկ և դառն կացութեան մը մատնուած, կ'ըսպասեն որ իրենց տարարող ծնողաց կանխահամ մահուամբը, իրենց բաժին ինկած այդ անտանելի վիճակը, դոնէ մասամբ ամոքեն անոնք՝ որոնք հանգստեան ու խաղաղութեան մէջ կը վայելեն կեանքի քաղցրութիւնները:

Յիշեցէ՛ք, մայրե՛ր, որ երբ գուք արտասահմանի ազատ ու ապահով երկիրներուն մէջ ձեր սիրելիներով չընկալատուած էք և երջանիկ ու բարեբաստիկ նոր թուական մը տօնելու պատրաստուած, անդին գաւառներուն մէջ անօթի, ծարաւ, սիրելազուրկ կը հեծեծեն ու լալազին հառաչներ կ'արձակեն խեղճուկ որբերու անհամար ձայներ:

Որո՞ւ պարտաւորութիւնն է մխիթարել այս եղկելիներն ու սիրովել անոնց դառն վիշտերը. ո՞վ պիտի փրկէ այս անտերունչ էակները սառչելու վտանգէն. և ո՞վ խնամք պիտի տանի անոնց դաստիարակութեան:

Ի զո՞ւր փնտուեցին անոնք զգայուն սիրտ մը. ի զո՞ւր օգնութեան կանչեցին բարեգործ ձեռք մը, որ մասամբ եւեթ թեթեւեղներ իրենց դառնաղէտ կացութիւնը:

Հանգստի ու երջանկութեան մէջ թաղուած արտասահմանեան հայ իգական սեռին ամենամեծ մասին վրայ, փոքրիկ աղբեցութիւն մը իսկ չ'ըրաւ այս մեղանոյ ձայները:

Ուղղելով մասնաւորապէս մեր խօսքը եգիպտացեան հայ օրիորդներու և տիկնանց, պիտի կրնանք ըսել թէ՛ անոնք իրենց մատին ծայրերովը անգամ չ'ուղեցին շարժել որբերուն ուսին վրայ դրուած անտանելի բեռը: Պէ՛տք է արգեօք բարեգործութեանց քանի մը օրինակներ մէջ բերել, հայ տիկիներե՛ր և օրիորդներե՛ր, ցոյց տալու համար թէ՛ մեր ալ վրայ կը ծանրանայ որբեր ինամելու նուիրական պարտականութիւնը, քանի որ մեր ալ կուրծքին տակ կը բաբախէ մօր մը գորովալից և քրոջ մը կարեկից սիրտը:

Ի՞նչ ըրինք ցայսօր այն ընտանեզուրկ լքեալներուն համար: Թերեւս ելան մեր մէջ այնպիսիներ, որոնք անհատապէս մէկ երկու աննշան բարեգործութիւններ ըրին և պիտի ըսեն թէ՛ մենք մեր պարտականութիւնը կատարեցինք. բայց այդ բաւական չէ:

Մենք մինչև ցարդ չ'ունեցանք բուն իսկ որբասիրական նպատակին ծառայելու համար զուտ իգական սեռէ կազմուած ընկերութիւն մը, որ հաւաքապէս կարենար օգտակար ըլլալ որբիկներուն. ասիկա մինչև նոյն ատեն միշտ մը պիտի ըլլար, որ քիչ բանով մը օժանդակել կրցողներուն փափաղն ալ իրագործուէր և անոնք ալ ունենային իրենց խղճի հանգարտութիւնը և գահունակութիւնը:

Ա՛րդ, աշխի տիկիներե՛ր և օրիորդներե՛ր, ձեր անտարբերութեան մեղադրելի կողմերը ցոյց տալու նպատակը չ'ունիմ՝ միայն պիտի առաջարկեմ թէ՛ մենք զեռ ժամանակ ունինք շարժելու և մեր ձեռքէն եկածները ընելու այն խեղճուկներուն համար, որոնց դաստիարակութիւնն ու յառաջդիմութիւնը և այս կարօտ վիճակներուն մէջ մեր կողմէ եղած օժանդակութիւնը, ո՛չ միայն խղճի հանգարտութիւն պիտի պատճառէ մեզ, այլ և՛ մեր ջանքերով պիտի կարենանք պատրաստել զարգացած անհատներ, որոնք ապագային մէջ մեր ազգին փրկութեանը համար իրենց կեանքը նուիրող կտրիճներ և աշխի մայրեր պիտի ըլլան:

Ուրեմն առանց յապաղելու, եգիպտացեան հայուհիներս ալ ընկերութիւն մը կազմելով, ունենալու ջանանք աշխատութեան բաժին մը՝ որբասիրամ սուրբ գործին մէջ: (1)

ՊԵՂԻՐԻՍ

(1) Թերթին նոր թղթակցուհին Պեարիս, իգական սեռին նոր կազմելիք որբասիրամ ընկերութեան կանանցիկն ալ պատրաստած և զրկած

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻՆ ՀԱՆԴԵՍԸ

Ի ԶԻՉԻՆԻԱ

Պատահական թղթակից մը հետեւեալը կը գրէ մեզ Աղբ.քառանդրիայէն Յուճուար 7 թուականաւ:

Ինչպէս արդէն լրագրիները ծանուցին, քաղաքիս Աղբ.քառանդրիայի Բնակչութեան ի նպաստ տրուելիք երեկոյթը տեղի պիտի ունենայ ամսոյս 24 ին Զիզիսի թատրոնին մէջ:

Մեծ ոգեւորութիւն կը տիրէ հիմակուց ընկերութեան գրասենեկին մէջ, որովհետեւ քիչ օրէն բաւական կարեւոր գումար մը պիտի գայ մեզմայնեղ այն դժուար կացութիւնը, որուն մէջ ինկած էր ընկերութիւնը՝ քանի մը ամիսներէ ի վեր վսեմ. Պօղոս փաշա նուպար կարեկից հոգածութիւն մը ցուցուցած է միշտ հանդէպ մեր Աղբ.քառանդրիային եւ այս անգամ, իր բարձր հովանաւորութեան տակ առնելով Յունվար 24 ի երեկոյթը, անգամ մը եւս առիթը կընծայէ հիմնադրելիք վթասէր զգացումներուն վրայ, որով միշտ օգտակար ըլլալ կը փափաքի այն գաղութին՝ որ իր նախապահակութեան տակ օր ըստ օրէ յառաջանալու և պայծառանալու վրայ է իր վարժարանով, եկեղեցիով և ընկերութիւններով:

Նորին վսեմութեան հովանաւորութիւնը՝ քնականաբար կերաշխատէր Զիզիսիայի հանդէսին յաջողութիւնը. Միայն պէտք էր գտնել այնպիսի անձնաւորութիւն մը՝ որ բարեգործական ձեռնարկի մը նիւթական յաջողութիւնը նպաստաւոր դարձնելու կարողութիւնը և ազդեցութիւնը ունենար: Ահա ինչո՞ւ Պօղոս փաշա, որ տակալին Եւրոպա կը գտնուէր, նամակով մը խնդրեց քաղաքիս ծանօթ ազգայիններէն Տիար Զարեհ Սըվազլէ, որ ստանձնէ այդ փափուկ և դժուարին պաշտօնը:

Լաւագոյն ընտրութիւն մը կարելի չէր ընել. որովհետեւ պէտք է ընդունիլ թէ Տիար Սըվազլէ միակ հայ անհատն է Աղբ.քառանդրիայ մէջ, որ իր գիրքով և աշխարհիկ յարաբերութիւններով կրնար ապահով կերպով գլուխ հանել իրեն տրուած պատուաբեր պաշտօնը:

Տիար Զարեհ Սըվազլէ որ կը պատկանի Զմիւռնիացի լաւագոյն ընտանիքի մը, տիեզերապէս ծանօթ և յարգուած, մօտաւորապէս 18 տարիէ ՚ի վեր հաստատուած է քաղաքիս մէջ և առեւտրական հրապարակին վրայ ինչպէս սակարանին մէջ, ճանչցուած է իբրեւ գործունեայ և պատուաւոր երկրասարդ մը: Տեղացի և եւրոպացի բարձր գասուն հետ շարունակ յարաբերութեան մէջ, քաղաքիս բոլոր ծանօթ գէմքերը սիրայօժար ընդունելութիւն մը ըրած են Տիար Սըվազլէի կողմէ եղած հրաւերին և տակալին ոչ ոք մերժած է անոր զրկած տոմսերը:

Անխորհրդապահութեան մը շնորհիւ, կրնամ այժմէն յայտարարել որ 24ի երեկոյթը 300—350

է մեզ ի հրատարակութիւն. կը յուսանք թէ իր նպատակին համակիրներ գտնելով, պիտի յաջողի իւր աշխի ձեռնարկը ի գլուխ հանել:

ուսկի զուտ հասոյթ մը պիտի արտագրէ ինչպստ Աղքատախնամի մնտուկին, գումար մը որով շատ մը խեղճութիւններ եւ ցաւեր պիտի ամոքին 'ի ձեռն Տիար Յովհաննէս Շնորհքի, որ այնքան պիտակցութեամբ եւ խղճամիտ ոգւով կը վարէ ընկերութեան Տնօրէն ժողովը :

Թատրոնին ամբողջ օթեակները եւ թիկնաթոռներու մեծագոյն մասը արդէն վաճառուած են ու երեկոյթը նիւթական, արուեստագիտական եւ աշխարհիկ, երբեակ տեսակէտներով խիստ փայլուն ըլլալ կը խոստանայ : Եւ անշուշտ այդ յաջողութեան վրայ մօտէն տեղեակ ըլլալու էր, Պ. Մ. . . ծանօթ հրեայ սեղանաւորը, որ երէկ սակարանին սանդուխներուն վրայ կը բացագանչէր, չըջապատուած պօրսայի ջոջերէն :

— Mais, mon cher, կըսէր, cela se comprend, il n'y a que ce diable de Sévazly pour faire des pareils tours de force.

Իբրեւ հայ՝ ուրախութիւն զգացի այն համարումին՝ զոր Տիար Սըվազը գիտցած էր ներշնչել գործի եւ սակարանի հերոսներուն :

Աշխարհիկ չըջանակներուն մէջ օրուան խօսակցութեան նիւթն է հայերու երեկոյթը, La fête arménienne — ինչպէս որ սովոր են յորջորջել այդ հանդէսը եւ ապահով եմ որ այդ իրիկունը Աղեքսանդրիոյ smart մասը ժամադիր պիտի ըլլայ Ձիդինիայի մէջ ցուցահանդէս մը կազմելու համար գեղանի դէմքերու, հոլանի ուսերու եւ շրջուցիչ գոնարեղէններու :

Ցաւալի է սակայն որ Հայ գաղութին պատկանող բարեկեցիկ պզտիկ բացառութիւն մը մէկ կողմ — պէտք եղած փութկոտութիւնը չի ցուցուներ սպառելու համար ամսերու դեռ չի ծախուած մասը, այն համակրութեամբ, որով Տիար Սըվազը ի հրաւերին պատասխանեցին օտար գաղութները :

Ինչ որ ալ ըլլայ, Ձի հանդէսը շատ նպաստաւոր պիտի ըլլայ Աղքատախնամ ընկերութեան համար, չնորհիւ վսեմ, Պօղոս փաշայի հովանաւորութեան եւ Տիար Սըվազի անձնուէր եւ անխոնջ ջանքերուն :

ԹՕԹՕ

ՆԱԽԱԳԱՅ ՔՐԻԿԵՐԻ ՆԱՄԱԿԸ

Ամերիկեան «ժուրնալ» թերթը, հրատարակած է Նախագահ Քրիկէրի հետեւեալ նամակը, որ Ամերիկայի ժողովուրդին ուղղուած է :

ԲՐԷԹՈՐԻԱ 19 Հոկտ. 99

Իմ սղջոյններս կը զրկեմ Ամերիկեան Նախագահին եւ ժողովուրդին :

Ընտրողական ազատութիւնն էր Անկլոթրանսովալական պայքարին գլխաւոր կէտը :

Ես միշտ տրամադրութիւն ունէի, այս հարցը՝ ինչպէս նաև ուրիշ մը, իրաւարարութեան ենթարկել եւ Անգլիան ընդ միշտ մերժեց :

Փորձ մը ես ըրինք սակայն, իբր իրաւարար միջամտելու համար՝ Միացեալ-Նահանգաց Նախագահը կանչել, բայց չ'յաջողեցանք, որովհետեւ ոչ ոք ունէինք ըզմեզ պաշտօնապէս Միացեալ Նահանգաց ներկայացնող :

Ընտրողական ազատ օրէնքը, որ մեր խորհրդարանէն քուէարկուեցաւ սարույս սկիզբը, 30,000 ընտրողներու քուէարկելու իրաւունքը պիտի տար, ներկայ ընտրական ցուցակներուն համեմատ :

Արդ, նախկին ընակիչներէն 30,000 հոգիներ կան որ պէտք էր արձանագրուէին այս ընտրական ցուցակներուն վրայ եւ ասիկայ անմիջապէս թուական առաւելութիւնը նոր ժողովուրդին պիտի տար :

Անգլիան փոխանակ ասիկայ ընդունելու մերժեց եւ զմեզ պատերազմի մղեց : Մենք հարկադրուեցանք պատերազմելու, որովհետեւ Անգլիան հազարաւոր զինուորներ Հարաւային Ափրիկէէ, մինչև մեր սահմանագլուխները բերաւ : Սա անխնայանի նպատակաւ, որպէսզի ստիպէր զմեզ ընել ամենինչ, զոր Անգլիա իրաւունք պիտի նկատէր ստիպողաբար մեզի կատարել տալու :

Ամերիկեան մեծ ազգը, որ իր ազատութիւնը ստանալու համար հարիւր տարիներէ աւելի կայ, միևնոյն Անգլիական ազգին հետ ստիպուեցաւ պատերազմել, իրմէ շատ հեռի գանուող փոքրիկ քոյր հասարակապետութեան մը պիտի ուզէ շնորհել իւր համակրութիւնը, որը պարտաւորեալ է հիմակ մարտնչել հզօր կայսրութեան մը հետ, իր սեփական անկախութիւնը պաշտպանելու համար :

ՔՐԻԿԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լծոտոնի նաւային եւ պատերազմային ելեմտական շրջանակներու մէջ՝ Հարաւ-Ափրիկեան պատերազմէն մինչև այսօր յառաջ եկած ծախսերը 40 միլիոն ոսկի կը հաշուուի, այսինքն՝ մէկ միլիար ֆրանք :

— Բարեյուալոյ «Տէյի Նիւզի» թղթակիցը հաստատ աղբիւրէ առած լուր մը կը հաղորդէ թէ՝ Բրէզիլիայի մէջ՝ այս պահուս ութը հազար եւրոպացի պահեստի կան, զօրավարներ եւ զօրքեր՝ այժմեան ռազմագիտական հնարքներուն քաջավարժ, ի մասնաւորի հրետանիի ռազմափորձերու համար :

— Լիվրքոյ Գուրիեր լրագիրը, Անգլիացւոց եւ Պօէրներու նպաստաւոր պայմանները կամ առաւելութիւնները քննելէ վերջ՝ կըսէ թէ, ամէն ենթագրութիւն ի հաշիւ առնելով Պօէրներու կողմը պէտք է հակի յաջողութեան նժարը եւ թէ՛ պէտք է մէկ Պօէրի դէմ առ նուազն չորս Անգլիացի հանել :

Եւ որովհետեւ, այսօր, երկու հասարակապետութիւններ — Թրանսիլա եւ Օրանժ — 80,000 պատերազմիկներ կը հանեն, պէտք է յաջող ելքի մը համար առ նուազն 320,000 զինուոր ունենալ :

— Նիւ Եօրքէ եւ Շիքսօէ առնուած թղթակցութիւններ կը հաւաստեն թէ Ամերիկեան մեծ քաղաքներու մէջ գտնուած Գերմանացիներ ձայնակից կըլլան Հոլանտացիներու, Անգլիոյ յարձակողական ընթացքին դէմ բողոքելու համար :

Հակաբրիտանական այս ցոյցին ի գլուխ կը գտնուին Ամերիկեան համաժողովի շատ մը անդամներ, որոնց քաջալեր կը կարգան լրագրաց մեծամասնութիւնը :

Իռլանտացի Քէմմիկս պատուիրակին նիւ Եօրքի մէջ գումարած է մեծ միթիկ մը, որուն մէջ առաջարկուած են շատ մը կարեւոր միջոցներ ձեռք առնել :

— Ռուսական «Նովոսթի» թերթը խորհուրդ կուտայ Ռուսիոյ եւ Պրսիոյ, օգտուելու Հարաւ-Ափրիկեան պատերազմի

առիթներէն. Ռուսիա իր առջև բանալով ճանապարհը՝ որ կը տանի մինչև Հնդկաց ծովը եւ Պարսկային ծոցը, իսկ Փրանսա եգիպտական խնդիրը մէջտեղ նետելով, հոգ չէ թէ նոյն իսկ 1900ի ցուցահանդէսը յետաձգուի այս առթիւ :

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Արժ. Տէր Գարրիէլ Բահանայ Բ. Ձէնձիրձեան հետեւեալ նամակը զրկած է մեզ, զոր նոյնութեամբ կը հրատարակենք իր խնդրանոց համաձայն :

Տէր Խմբագիր

Ձեր պատուական լրագրոյ 46 թիւ՝ Ազգային լրոց մէջ, յանձնա յօդուած մը տեսնուած է. սակայն բոլորովին աւելորդաբանութիւններ կը պարունակէ :

Յիշուի բժշկաց խորհրդով որդուցս հետ՝ վաղուց Գահիրէ ապաստանելու որոշումն եղած էր, եւ յիշուի հրամանաւ վսեմափայլ Տիգրան փաշայի, Երեսփոխանական եւ Գաղաքական վսեմաշուք ժողովոյ անդամոց մեծամասնութիւն՝ նկատի առնելով իմ կեանքն եւ կացութիւն, 'ի շարս Արժ. Եղբարցս դասակից եղած լինելուս շնորհն՝ անցեալ ամսոյ 16/28 Գեկտ. աւետեցին եւ ուրախութեամբ սիրելի Արժ. Եղբայրներս՝ շնորհաւորեցին (1) :

Այսու՝ միամիտ սրտիւ պարտաւորեցին զիս, Օրհնել սիրելի Ազգս եւ ըստ կարեաց ծառայել :

Վերոյիշեալ շնորհաց արժանի տեսնուելուս՝ լի հոգւով մխիթարուած, խոնարհաբար յամենայն իմ եւ իմոցս շնորհակալութիւն եւ երախտապարտութիւնն հրապարակաւ կը ծանուցանեմ, եւ իբր պարս անձի ներկայիս 'նոր Տարին շնորհաւորելով կը բարեմաղթեմ, Բարձրեալն Աստուած համայնից նոր եւ բարեբաւտիկ կեանք եւ յաջողութիւն պարգևէ :

Մատուցանելով անկեղծ սէր յարգանքներս ողջոյնս եւ օրհնութիւնս. եմ եւ Մամ միշտ ազօթարար սիրելի Ազգիս ԳԱԲԻԷԼ ԲՆՅՅ. Բ. Ձէնձիրձեան 28/3 Յունուար 1900

Գահիրէի Աղքատախնամ ընկերութեան մասին լուրերը շատցած են հրապարակին վրայ :

Իրաւ է թէ մենք գործունէութիւն պահանջած էինք Աղքատախնամի վարչութիւններէն, սակայն մեր հրաւերին, կերելի թէ, քիչ մը աւելի եռանդեամբ պատասխանել կուզուի :

Գործ. ժողովոյ երկու անդամոց ստորագրութեամբ շատ ընդարձակ նամակ մը

(1) Տէր Գարրիէլ Բահանայ իր նամակաւ մեր 46 թիւով բաժնեկր հաստատուով հանդերձ աւելորդաբանութիւն բարդ կը գործածէ չենք զիտեր ինչու :

Արդեօք մեր 46 թիւով ըրած կանխատեսութիւնը, իրեն սիրելի եւ Արժ. Եղբարցիցն նկատմամբ, այժմէն իրականութեան ճաղրուն մէջ մանեղ սկսած են . . . դեռ կանուխ չէ :

Խ :

հասած է մեզ, որուն մէջ Աղքատախնամի Գիւմնիսի գէմ գառնապէս կը գանգատին. և նոյն իսկ այդ նամակէն կը տեղեկանանք թէ խնդիրը արդէն Գաղաք. Ժողովոյ սեղանին վրայ հանուած է ի պարտ ու պատշաճ անօրինութիւն և ժողովը երկու բողոքարկու անդամաց իրաւունք տուած է անընդհատ շարունակել ընկերութեան գործերը:

Գործ. Ժողովոյ մեզ ուղղած վերոյիշեալ նամակի հրատարակութիւնը տեղւոյ անձկութեան պատճառաւ յետաձգելու ըստ ստիպուած լինելով, հարկ կը համարինք ծանուցանել թէ Աղքատախնամ ընկերութեան գործառնութիւնները ընդհատուած չեն և ըստ որոշման Գաղաք. Ժողովոյ Գործ. Ժողովոյ երկու անդամք պիտի շարունակեն ցնոր անօրինութիւն, հետեւաբար երբ հաւաքիչը ներկայանայ, արգոյ ազգայինք թող հաճին իրենց վճարումներն ընել կանոնաւորապէս, որոյ շնորհիւ միայն պիտի հոգացուին կարօտեալներն այս տօնական օրերու մէջ:

Մեր առաջիկայ Շաբաթ օրուան թիւը, նոր Տարւոյ աւթիւ բացառաբար առանց յայտարարութեան պիտի հրատարակուի. հետեւեալ բովանդակութեամբ:

- 1 Կողանդը — Յար. Ս. Շամլրեան
- 2 Անել դրութեան եւքը — Ավօ
- 3 Պէտէվի (բանաստեղծ.) — Մառի
- 4 Գիտական ճշմարտութիւն մը եւ 1900 տարին — Հ. Կ. Պէրպէրեան:
- 5 Նոր Տարի — Պ.
- 6 Յուշք իմ — Պէտգրիս
- 7 Ինչ մը կրօնական — Նելսոն

Հ Ն Ո Ւ Ա Ք Ի Ր

ՀԱՎԱՍԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆՆԵՆ

Լոնտոն 7 յունվար
Պատերազմական նախարարութիւնը կը ծանուցանէ որ Զօրավար Ֆրէնչի բանակատեղւոյն մօտ, Պօէրները գերեզմարեցին Սիւֆօրք զօրագնդին խմբակը իր բոլոր պաշտօնեաներով:

Բրէդորիա 7 յունվար
Պօէրները գրաւեցին Բիւրիւման՝ որուն պահապան զօրքը, 120 հոգի և 12 զօրավարներէ բաղկացեալ անձնատուր եղան:

8 յունուար

Ժէնէրալ Պիւլէր կը հաղորդէ 7 յունուար թուականաւ Փ. Ռայթի հետեւեալ հեռագիրը:

Պօէրները Լէյսամիթի վրայ յարձակում ըրին ամսոյս 6 ին. խել մը մարտկոցներ հետզհետէ գրաւեցին, բայց ի վերջոյ ետ մղուեցան ամեն կողմերու վրայ շատ մը կորուստներ տալով:

Մեր զօրքերը թէպէտ սաստիկ խոշտանգուած, բայց խանդավառ են:

Պէրին 8 յունվար

Գօլնիշէ Զայրունկ կը ծանուցանէ թէ Ռուսիա շրջաբերական մը զրկած է Եւրոպական բոլոր դիւանատանց, հարցնելու համար թէ արդեօք Հարաւ. Ա. իրիկեան հասարակապետութիւններու հետ պաշտօնական թէ անպաշտօն հեռագրերու փոխանցման ջնջումը հակառակ չէ՞ ընդունուած հեռագրական համաձայնութիւններուն:

Բափ 9 յունուար

Ժէնէրալ Ֆրէնչ կը հեռագրէ թէ, ամսոյս 1 էն մինչև 6 իր կորուստը 217 մարդ եղած է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

« Ժուրնալ տիւ Գէո » ի մէջ կը կարգանք. — Մեր Պոլսոյ թղթակիցը իր մէկ նախորդ գրութեամբ կանխագուշակած էր՝ որ Ղազի Մուխթար փաշա, ատենէ մ'ի վեր Երլտրդի մէջ լաւ աչքով նայուած չ'ըլլալով, չ'պիտի յապաղէր կոչուելու ուրիշ պաշտօններու. և իրօք, այսօր կիմանանք որ Օսմանեան Բարձր Բօմիսէրը, Կայսերական Իրատէի մը համեմատ՝ Ստանաի թըրքական բանակին մուշիր քալէթ կարգուած է, և իր տեղ Ռազիպ փաշա պիտի անուանուի Եգիպտոսի Օսմանեան կայսերական բարձր քօմիսէր:

« Լ'Արմէնի » էն կը քաղենք հետեւեալը. — Ռուս կառավարութիւնը կը պահանջէ որ հայ հպատակները ալ ևս երգում չընեն դատարաններու առջև հայերէն լեզուաւ, այլ Ռուսերէն միայն և թէ Էջմիածնի Սիւնօղը (և ոչ թէ Կաթողիկոս) դատաւոր ըլլայ ամուսնալուծութեան խնդիրներուն:

Թուրք կառավարութիւնը կը պահանջէ որ Պէհա պէյ, իսլամ ընդհանուր դատաւարը, պաշտօնապէս ներկայ ըլլայ Սիւի կաթողիկոսական ընտրութեան, հակառակ բոլոր նախորդներուն: Խրիմեան կը բողոքէ, իսկ Օրմանեան գլուխ կը ծռէ:

Բրէնս Սէյֆ-իլ-Տիւնի ներման ի նպաստ աղերսագիր մը երէկ Ն. Բ. Վ. Խալիկ ներկայացուեցաւ. բայց կենթադրուի որ սպասուած արդիւնքը չ'պիտի ունենայ:

ԿԱՆԽԱԴԱՏՈՒԹԻՒՆ

Մարդկութիւնը յարածամ անպիտակ զոհն է իր կանխադատութեանց:

Մեր մէջ արմատացած կանխադատութիւնը մեզ կ'արգիլէ խորհելէ, փորձառութեանց դիմելէ, մեր բանականութիւնը գործածելէ և մեզ կը զրգէ մերժելու կամ ընդունելու ինչ որ մեր յախուռն կարծեաց, ըմբռնմանց չ'համապատասխաներ կամ կը համապատասխանէ՝ ըստ պարագային: Կարելի է ըսել թէ երկրագունդիս վրայ արարակառող տառապանքներու և թշուառութիւններու և տեսակ տեսակ չարիքներու եթէ ոչ միակ, գէթ գլխաւոր պատճառն է այդ կանխադատութիւնը, որ հոմանիշ է յաւակնտուութեան:

Զ'մոռցուած և հանրածանօթ մի քանի օրինակներով պարզենք մեր այս առաջադրութիւնը:

Ո՞վ պիտի հաւատայ եթէ մէկն ըսէ թէ Հայկական խնդրոյն վիժումը — այս կէտին վրայ որչափ պնդենք քիչ է — և, աւա՛ղ. այնքան աղիտաբեր ըլլալը, կը պարտինք միայն և միայն մեր կանխադատութեան: Եւ սակայն ճշմարտութիւնն այս է: Արդարեւ եթէ մենք այդ յեղափոխական շարժմանց չ'սկսած ջանայինք նոյն հասկնալ տրամագրութիւնն անոնց, որոնց միջամտութիւնն և օգնութիւնը կը յուսայինք, և երկրորդ՝ Օսմանեան գաղտնի ծրագրոյն (1) և անոր գործադրուելու եղանակին վրայ մի քիչ գաղափար կազմէինք, հարկ կ'ըլլար կամ յեղափոխութիւնը յետաձգել և կամ ուրիշ ուղղութիւն մը տալ: Բայց մենք ի՞նչ ըրինք: Նախադատելով որ տէրութիւնք չ'պիտի թողուն որ քրիստոնեայ տարր մը բնաջինջ ըլլայ, նախադատելով որ անոնց քաղաքականութիւնը կը պահանջէ միջամտել, և նախադատելով որ Օսմանեան կայսրութիւնը անկարող էր յեղափոխութիւնը մարելու... սկսանք գործել, և թուրքն ալ սկսաւ գործել, և մինչև և այսօր կը շարունակէ իր գործողութիւնը:

(1) Գաղտնի ծրագրի մը գոյութիւնը ընդունելէ և խոստովանելէ վերջ, յեղափոխութիւնը կանխահաս նկատել շատ անհասկնալի է: Այս պարագան մեր թղթակցին բացատրելու համար արդի հանգամանքները թոյլ չ'պիտի տան մեզ, ուստի առ այժմ գանց կ'ընենք ատով զբաղելու.


ԼԱ ՄԻՉՈՒՄԱԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՅԽԱՐՅԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱԻՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 1 ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:
Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:
Ս. ԼԵՈՒՍԻ Ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրատարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:
ԱԼԼԵՎԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յ'Ալէքսանդրիա.

Վ. Ա. ՃԱՍՏՈՒՆ ԹԷՅԻ
Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ
ՇԱՐԼ-ԱՊՏԻԿ-ԱԶԻԶ



Թէ՛յի գործածութեան ընդհանրանալովն, թէ՛յի ճաշակն ևս նրբացած է. որով թէ՛յի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատե և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քսանամեայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէ՛յեր ՉԻՆԱՍՏՈՒՆԻ, ՃԱՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ և ՀՆԻԿԱՍՏՈՒՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձեռնառան եղանակի յարմար թէ՛յեր, որոնք իրենց գերնտիր հոտաւտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գնելու ՉԱՓԱՋԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամատչելի են:

Թէ՛ Կ. Պոլսոյ և գաւառաց, և թէ՛ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վստահութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր սկզբունքին, որ է՝

Ազգամասօրին Թէ՛յերու սեսակի, կօխի և զնոց մասին:

Մեծաքանակ թէ՛ փոքրաքանակ մեզի եղած կ'ԱՆԻԿի դրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

8 — 30

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՋԱՆՈՒԹԻՒՆ

ԿիրԱԿի 7 ՅՈՒՆՎԱՐ 1900

Ա.	Թիւ 3337	շահած է	Պրանք	1000
Բ.	" 3783	"	"	200
Գ.	" 4350	"	"	100
Դ.	" 2196	"	"	50
Ե.	" 50	"	"	50

Հետևեալը 23 ական ֆրանք կը շահին

1032	7350	1598	5976	983	8776
2656	3082	6946	6193	7549	6243
4949	4596	3710	2149	8137	212
7288	2362	4943	638		

ԽՆՆՅՈՒՄ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, ընկերութեան անուակին սեփականութիւնը կը լինին:

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

Վ. Ա. ՃԱՍՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՆՅԵՐՈՒ

ՓՕՆՕԿՐԱՑ

Գ. Յ. ՀԻՐԷ, — Մուսի փողոց, — Գ. Ա. ՀԻՐԷ

Ս. և Ս. Սեմավիի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի և ջօնաօլի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԳԻՄԵՑԷՒՔ ՀՈՆ և պատի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց և կանանց ժամացոյցներ, աքամանդազարդ, ոսկի, արծաթ և ցիֆի:

Յրանաական և ամերիկեան պարանաց ամենաընտիր տեսակներէն զարդեղէններ, շղթաներ, օղեր, մասսաճիներ և այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններու ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՋԱՓԱԿՈՐ

46—50

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ամենափափուկ ստամոքս ունեցողներուն համար:

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու և վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարսութիւն կը պատճառեն և հետևաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կ'ընեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն և հետևաբար բժշկաց յաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ գիմեկ

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՐ

Օռօցի Պափ վաճառատան մօտերը, Կամե-էլ-Պեմաթի ճիւղի դիմացը

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախողներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխարդախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմիջելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէ՛յի և կաթի պարսիմաններ և այլն:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

21—30

Եւ այսօր Անգղիացոց Թրանսպարի մէջ կրած ճախորդութեանց սկզբնապատճառն ուրիշ բան չէ բայց միայն կանխադատութիւն: Պ. Չէմպրլէյն կանխադատելով որ Պօէրները չ'պիտի համարձակին իրեն հրամաններուն անաստելու, կանխադատելով որ զէնք և ուղղամթերք չունին, անհոգ գրանուեցաւ ի սկզբան, և երբ խելքը զլուրը եկաւ՝ ժամանակն անցած էր:

Թէ՛ Հայկական և թէ՛ Անգլո-Թրանսպարիան ինդիքներուն մէջ եթէ մարդ մը ձայնը բարձրացնելով յեղափոխականներուն և Պ. Չէմպրլէյնի ըսէր թէ կը սխալին, անպատճառ կամ մատնիչ (ինչպէս որ ըսուեցաւ) կամ խենդ պիտի կոչուէր:

Պէտք է ուրեմն սպասել որ եղելութիւնները պատասխանեն այդ անձերուն:

Մարդիկ միմիայն իրենց հանրային կեանքին մէջ չեն կանխադատ, այլ նաև իրենց ընտանեկան շրջանին մէջ: Ո՞վ երբէք չէ լսեր.

— Հօրս տունը ասանկ կ'ընէին.

— Մեծ հօրմէս ինչ որ տեսայ, այն պիտի ընեմ:

— Մեր նախնիքը այսպէս վճռած են. և ըն. և ըն:

Եւ սակայն ո՛չ մեր հայրը, ո՛չ մեծ հայրը և ո՛չ ալ մեր նախնիքը անսխալ չէին. — անսխալականութիւնը չ'կրնար համաձայնիլ մահկանացուութեան հետ — և կարելի է որ այդ լուսափոփները անկեղծօրէն կը խօսէին և կը գործէին այն աստիճան մտաւորական մակարդակին համեմատ, և թերեւս զանոնք խաբողներ ալ եղած էին:

Իսկ այսօր դիտութեանց և հետազոտութեանց շնորհիւ այլեւայլ դիտեր եղած են, որոնց չ'հաւատալու համար նախնեաց ետեւն ապատանիլ կանխադատութիւն է և յիմարութիւն: Ամեն նորութիւն առանց քննութեան և առանց նշանակուած փորձաքարին զարնելու՝ ընդունիլ և իւրացնելն ալ նորամտութիւն և թեթեւօտիկութիւնն է. փորձելու, քննելու և յետոյ ընդունելու կամ մերժելու է:

Ուշագործութեան արժանի կէտ մը: Նորահնար կարծուածներէն մեծ մասին աւելի ճիշդ կ'ըլլայ եթէ նորագիւտ անունը տանք, վասնզի շատ բաներ կան որոնք թէեւ չէին ճանչցուած բայց իրենց գոյութիւնն ունէին աշխարհիս սկիզբէն ի վեր: Ելեքաբականութիւնը, շողիներու մեքենաշարժ գործութիւնը, բնագիտութեան երեւան հանած գաղտնիքները, զանազան դեղեր և մտազնոր և ըն. և ըն. բնութեան մէջ էին զարբէ ի վեր և միայն պարագայի և փնտրողի կ'սպասէին գտնուելու, երեւան ելլելու համար:

Որ մարդ հիմայ կրնայ ուրանալ ասոնց գոյութիւնը և ճշմարտութիւնը, առարկելով թէ իր նախնիքը կ'անգիտէր զանոնք, և անոնց համար որեւէ բան մ'ըսած չէր:

Մեր նախնիքը կը կարծէին որ այս մեր փոքրիկ երկրագունդը, արեգակնային գրութեան կեդրոնն է, և արեգակն ու մոլորակները երկրին շուրջը կը դառնան. դարեր ետքը կոպերնիկոս և Փալլիէոս անուամբ երկու հետազոտողներ այս կանխադատութեան սխալ ըլլալը հասկցուցին և ընդունուած կանոնին հակառակն ապացուցին: Եւ թէպէտ ի վարձատրութիւն իրենց աշխատանաց՝ Հռօմէայ եկեղեցին զանոնք բանագրեց իւրեւ հերետիկոս, սակայն չկրցաւ արգիլել որ նախնեաց այդ գաւանանքը սխալ եղած չ'ըլլայ:

Կանխադատութեամբ, հազարաւոր մահապարտներ սրբացած և բիւրաւոր անմեղներ դատապարտուած են:

Կանխադատութիւնը կամ յաւակնոտութիւնը ինչ որ միեւնոյնն է՝ մեզ միշտ վտանգին մէջ կը պահէ սուտը ընդունելու իրրեւ ճշմարտ, և ճշմարտը մերժելու իրրեւ սուտ:

Վերջապէս կանխադատութիւնը մեզ առաջնորդած է և կ'առաջնորդէ դէպ ի նախապաշարում և դէպ ի յաւելորդապաշարութիւն. մեզ ծաղրելի կ'ընէ և անդարմանելի չարեաց ծնունդ կուտայ:

Մենք՝ Հայերս՝ իբր ուշիմ և իրապէս ողջամիտ ազգ. հեռանալք այս տեսակ աւանդական մոլութիւններէ. խորհելով գործնք, քննելով մերժենք կամ ընդունինք, բանէ մը չչլանանք, և միշտ ճշմարտութիւնը փնտռենք ու սիրենք:

Գահիրէ 7/1/1900

Պ.